


"ԱՆՁԱՄԲ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ"

Posted on May 2, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



[Norat Ter-Grigoryants](#) is a retired Soviet and Armenian lieutenant-general who in 1992 was invited from Russia by the government of Armenia to assume the command of the Armenian Army. He was a key figure in organizing the military into an effective force and developing the country's military doctrine which emphasized the role of motorized brigades to allow for operational mobility and flexibility. The air defense forces, previously almost non-existent in Armenia, were also equipped and organized.

Ter-Grigoryants served as First Deputy Minister of Defense and Acting Minister of Defense of Armenia. He returned to Russia to retire in 1995. The general is highly decorated. He is a president emeritus of the Council of Veterans of Russian Land Forces, a board member of the Union of Armenians of Russia, also a founding member and president of the National Congress of Western Armenians.

For further information about the general click on [Norat Ter-Grigoryants](#).

In an interview (in Armenian) with "First News" the lieutenant general stated that he does not consider the transition from the semi-presidential system to the parliamentary to be appropriate on two counts, that it was a ploy by Serzh Sargsyabn to retian power, and more importantly that Armenia being at war with Azerbaijan the parliament can not "manage" the conflict. He cites the example of parliament's inability to tackle the Armenian citizens' rebellion against Serzh Sargsyan and the current ruling system. The general values highly Nikol Pashinyan who managed to organize the demonstrations without bloodshed. The renowned general did not want to speak publicly about the details of what advice he would give to the new Armenian government, the army and the defense.

Click on "[First News](#)" for the electronically translated English text.

[Norat Ter-Grigoryants](#) is a retired Soviet and Armenian lieutenant-general who in 1992 was invited from Russia by the government of Armenia to assume the command of the Armenian Army. He was a key figure in organizing the military into an effective force and developing the country's military doctrine which emphasized the role of motorized brigades to allow for operational mobility and flexibility. The air defense forces, previously almost non-existent in Armenia, were also equipped and organized.

Ter-Grigoryants served as First Deputy Minister of Defense and Acting Minister of Defense of Armenia. He returned to Russia to retire in 1995. The general is highly decorated. He is a president emeritus of the Council of Veterans of Russian Land Forces, a board member of the Union of Armenians of Russia, also a founding member and president of the National Congress of Western Armenians.

For further information about the general click on [Norat Ter-Grigoryants](#).

In an interview (in Armenian) with "First News" the lieutenant general stated that he does not consider the transition from the semi-presidential system to the parliamentary to be appropriate on two counts, that it was a ploy by Serzh Sargsyabn to retian power, and more importantly that Armenia being at war with Azerbaijan the parliament can not "manage" the conflict. He cites the example of parliament's inability to tackle the Armenian citizens' rebellion against Serzh Sargsyan and the current ruling system. The general values highly Nikol Pashinyan who managed to organize the demonstrations without bloodshed. The renowned general did not want to speak publicly about the details of what advice he would give to the new Armenian government, the army and the defense.

Click on "[First News](#)" for the electronically translated English text.

Նորատ Տեր-Գրիգորյանց

Խորհրդային հայտնի զորահրամանատար, ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի նախկին պետ (1992-1995 թթ.), 1993 թ. պաշտպանության նախարարի պաշտոնակատար, գեներալ-լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանցը ճիշտ չի համարում անցումը կառավարման կիսանախագահական համակարգից խորհրդարանական հանրապետության՝ ասելով, որ Հայաստանը պատերազմի մեջ է Ադրբեջանի հետ, և խորհրդարանը չի կարող «կառավարել պատերազմը»: Այնուամենայնիվ, նա աջակցում է Հայաստանի քաղաքացիների ընդվզումը Սերժ Սարգսյանի և ներկայիս իշխող համակարգի դեմ և բարձր է գնահատում Նիկոլ Փաշինյանին, որը կարողացավ լավ կազմակերպել ցույցերը և թույլ չտալ արյունահեղություն: Այնուամենայնիվ, անվանի գեներալը չցանկացավ բացել փակագծերը և հրապարակային խոսել այն մասին, թե ինչ խորհուրդներ կտա Հայաստանի նոր կառավարությանը՝ բանակի և պաշտպանության ամրապնդման մասով:

Ստորև ներկայացնում ենք Նորատ Տեր-Գրիգորյանցի պատասխանը «Առաջին լրատվական»-ի հարցին:

- Պարոն Տեր-Գրիգորյանց, ըստ ամենայնի՝ Հայաստանը կունենա նոր՝ ժամանակավոր կառավարություն՝ Նիկոլ Փաշինյանի ղեկավարությամբ: Ի՞նչ խորհուրդներ կարող եք նրան տալ Հայաստանի զինված ուժերի մարտունակության բարձրացման, երկրի պաշտպանունակության և անվտանգության ամրապնդման առնչությամբ:
- Ես չգիտեմ՝ կոռեկտ է արդյոք նոր վարչապետին հուշելը կամ խորհուրդներ տալը: Ես չգիտեմ՝ ով կլինի նոր վարչապետը: Դա կորոշի խորհրդարանը: Իմ կողմից դա կոռեկտ չի լինի: Ես չեմ ուզենա իմ մտքերը հայտարարել ի լուր աշխարհի, որովհետև իմ առաջարկները շատ հզոր են, պետքական և վտանգավոր հակառակորդի համար: Ես դա կասեմ անձամբ իրեն և անձամբ պաշտպանության նախարարին, երբ նա կդառնա վարչապետ, որովհետև ես նման բաները ասել եմ անձամբ նախագահին՝ Սերժ Սարգսյանին: Նման բաներ ես ասել եմ Արցախի նախագահին և սպաներին, երբ նախորդ տարվա մայիսին ելույթ էի ունենում Շուշիում:

Մի անգամ ինձ լրագրողներից մեկը հարցրեց, թե ինչ կարծիք ունեմ այն մասին, որ Հայաստանը նախագահական համակարգից անցնում է խորհրդարանականի: Ես պատասխանեցի, որ հայ ժողովուրդը որոշել է այդ հարցը, բայց իմ կարծիքով, ռազմական տեսանկյունից՝ նախագահականից խորհրդարանական հանրապետության անցնելը կոպիտ սխալ էր, որովհետև Հայաստանը և Արցախը պատերազմի մեջ են հարևան պետության հետ: Հայաստանը բլոկադայի մեջ է, իսկ բլոկադան ռազմական տերմինաբանությամբ հարևան պետության զինված ուժերի կողմից Հայաստանի տարածքը և ժողովրդին շրջափակման մեջ պահելն է: Իսկ դա պատերազմ վարելու միջոցներից մեկն է, դա պատերազմի վիճակն է: Այս իրավիճակում պետությունը ղեկավարում է գերագույն հրամանատարը՝ երկրի նախագահը, բայց ոչ խորհրդարանը: Դա երևաց հատկապես հիմա, երբ պարոն Փաշինյանը կազմակերպեց ժողովրդին իշխանական կառույցների դեմ: Դուք նկատեցի՞ք, որ նույնիսկ խորհրդարանի շունչը չզգացվեց այդ ցույցերի ժամանակ: Դուք տեսե՞լ եք որևէ պատգամավորի, որ նա կողմ կամ դեմ լինի, մասնակցի գործընթացին կամ ինչ-որ բան անի: Ուրեմն պատերազմի ժամանակ խորհրդարանը որևէ բան չի անելու, որովհետև պատերազմը չի կառավարվում հանրության կողմից: Սա գլխավոր սխալն է: Այժմ վարչապետն է դառնում պետության ղեկավարը, իսկ նախագահը կոպիտ ասած՝ նման է անգլիական թագուհուն: Որքան ես հասկացա՝ Սերժ Սարգսյանն այս փոփոխությունն արել էր հատուկ իր համար, որպեսզի շարունակի ղեկավարել երկիրը, և շատ կոպիտ սխալ արեց: Այդ պատճառով անկառավարելի վիճակ է ստեղծվել: Այնուամենայնիվ, ինչ եղել էր եղել է:

Ես, օրինակ, աջակցում եմ մեր հայ ժողովրդի գործողություններին, որն արդեն զգվել էր երկրի ապաշնորհ ղեկավարությունից: Այլ հարց է, թե ինչ միջոցներ են ընտրվում գործողությունների համար: Ամենագլխավորը՝ ես ուրախ եմ, որ մեզ մոտ տեղի չունեցավ «մայդան»՝ ինչպես Ուկրաինայում: Հայ ժողովուրդը շատ խելացի վարվեց, և պետք է արժանին մատուցել Փաշինյանին: Նա կարողացավ լավ կազմակերպել ամեն ինչ, թեև նա կարող էր բոլոր այդ հարցերը բարձրացնել խորհրդարանում՝ որպես պատգամավոր: Լավ է, որ նրանք թույլ չտվեցին «մայդան», արյունահեղություն: Եվ պաշտպանության նախարարը շատ խելամիտ վարվեց: Նա թույլ չտվեց, որպեսզի բանակը միջամտի, որովհետև եթե նա աներ դա, ապա զինվորը ստիպված կլիներ կրակել իր մոր և եղբոր վրա: Դա կոպիտ սխալ կլիներ, որովհետև բանակը նախատեսված է արտաքին ագրեսիան հետ մղելու և երկիրը պաշտպանելու համար: Ինչ վերաբերում է իմ առաջարկներին պարոն... Ես չգիտեմ Փաշինյանը կլինի, թե մեկ ուրիշը... ում որ կընտրեն... Բայց ես կառաջարկեի, որ շատ լուրջ վերաբերվեն Հայաստանի զինված ուժերի կառավարմանը և ամբողջությամբ պարզեն այն թերություններն ու բացթողումները, որոնք ի հայտ եկան 2016 թ. ապրիլյան իրադարձությունների ժամանակ, երբ Ադրբեյջանի ագրեսիվ զինված ուժերը, խախտելով բոլոր միջազգային պայմանագրերը և ՄԱԿ-ի բանաձևերը, հարձակվեցին Արցախի վրա: Պետք է պարզել այդ թերությունները: Թեև նախկին նախագահը՝ Սերժ Սարգսյանը,

աշխատանքից ազատեց մի քանի հոգու, բայց նշանակեց մարդկանց, ովքեր ունեն մեղավորություն այս գործում: Պետք է լուրջ աշխատանք իրականացնել այս ուղղությամբ:

Երկրորդը, պետք է հատուկ ուշադրություն դարձնել աշխատատեղերի ստեղծման, երկրի տնտեսության, արտադրության վրա: Պետք է ստեղծել աշխատատեղեր՝ համագործակցելով Ռուսաստանի հետ: Դա իմ անձնական կարծիքն է:

